ՀՀ ԵՎ ԼՂՀ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱԶՄ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ (30.06.2010 Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ)

Նյութում վերլուծված են միայն ՀՀ և ԼՂՀ[1] տարածքներում ներգրավված և տեղաբաշխված միջոցները, ուստի ներկայացված տվյալները կարող են տարբերվել ՀՀ կենտրոնական բանկի այլ տեղեկատվական նյութերում հրապարակված տվյալներից, քանի որ վերջիններում ներառված են նաև ՀՀ տարածքից դուրս ներգրավված և տեղաբաշխված միջոցները:

1. ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

30.09.00 - 30.06.10թթ. ժամանակահատվածում ներկայիս գործող բանկերի՝ ՀՀ և ԼՂՀ տարածքներում տեղաբաշխած ընդհանուր վարկերն ավելացել են 1080%-ով, իսկ եթե ներկայումս գործող բանկերի վարկային ներդրումները համեմատվում են 30.09.2000թ. գործող բոլոր բանկերի ընդհանուր վարկային ներդրումների հետ, ապա աճը կազմում է 717% (*տե՛ս աղյուսակ 1 և գծապատկեր 1*):

30.06.09 - 30.06.10թթ. ժամանակահատվածում (այսուհետ հաշվետու տարում) բանկային համակարգի վարկային ներդրումների ծավալն ավելացել է 25%-ով և կազմել 792.0 մլրդ դրամ:


Աղյուսակ 1 . Բանկերի տրամադրած վարկերի ծավալները

	30.09.00 *(մլն դրամ)*	**31.12.01** *(մլն դրամ)*	**30.06.03** *(մլն դրամ)*	**30.06.04** *(մլն դրամ)*	**30.06.05** *(մլն դրամ)*	**30.06.06** *(մլն դրամ)*	**30.06.07** *(մլն դրամ)*	**30.06.08** *(մլն դրամ)*	**30.06.09** *(մլն դրամ)*	**30.06.10** *(մլն դրամ)*	**30.09.00-30.06.10** *(%)*	**30.06.09-30.06.10** *(%)*
Բոլոր բանկերը	96933	87004	91163	124386	159043	225327	307123	556483	632074	792046	717	25
30.06.10թ. դրությամբ գործող բանկերը	67144	74703	90146	124386	159043	225327	307123	556483	632074	792046	1080	25

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*


[1] *ԼՂՀ-ին վերաբերող տվյալները տարանջատված չեն ՀՀ մարզային տվյալներից, և ԼՂՀ ու ՀՀ տարածքների տվյալները դիտարկված են համընդհանուր համատեքստում:*

Գծապատկեր 1



30.09.00-30.06.10թթ. ժամանակահատվածում բոլոր մարզերում արձանագրվել է վարկային ներդրումների աճ: (*տե՛ս գծապատկեր 2*):

Գծապատկեր 2




** Պատկերի հստակության նպատակով Երևանի ցուցանիշները չեն ներառվել, Երևանում վարկային ներդրումների ծավալը 30.06.2010թ. դրությամբ կազմել է 542 մլրդ դրամ:*

Երևանում վարկային ներդրումներն աճել են 26.2%-ով (112.5 մլրդ դրամով), իսկ ՀՀ մնացյալ մարզերում և ԼՂՀ-ում ընդհանուր վարկային ներդրումներն աճել են 18.8%-ով (47.4 մլրդ դրամով), ինչի արդյունքում ընդհանուր վարկային ներդրումներում Երևանին հատկացված վարկերի տեսակարար կշիռը ավելացել է 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 68.4% (*տե՛ս գծապատկեր 3, հավելված 1.2*):


30.06.09-30.06.10թթ. ժամանակահատվածում վարկային ներդրումների աճի տեմպը (25.3% աճ) զիջել է վարկային ներդրումների աճ ապահոված մարզերից Արմավիրի մարզը (15.1% աճ), Արագածոտնի մարզը (6.2% աճ), Լոռու մարզը (10.5% աճ) և Արարատի մարզը (24.1% աճ), իսկ Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում գրանցվել է վարկային ներդրումների անկում համապատասխանաբար 21.7%-ով և 19.7%-ով (*տե՛ս հավելված 1.7*):

Գծապատկեր 3



2000-2010թթ. ժամանակաշրջանում վարկային ներդրումներում Երևանի մասնաբաժինը հիմնականում տատանվել է 70%-ի շրջանակներում: 31.12.01թ. դրությամբ միայն Երևանում վարկային ներդրումների մասնաբաժինը զգալի նվազել է՝ պայմանավորված այդ ժամանկաշրջանում Լոռու մարզում քիմիական արդյունաբերության վարկավորման ծավալների 4.8 մլրդ դրամ աճով (որն հետագայում դարձյալ նվազել է) և Երևանում էներգետիկայի վարկավորման ծավալների 5.5 մլրդ դրամ նվազմամբ (*տե՛ս գծապատկեր 4*):

Գծապատկեր 4



Հաշվետու տարվա ընթացքում ակտիվների (վարկային ռիսկ պարունակող) քանակը աճել է 11%-ով և կազմել 515.6 հազար: Նշված ժամանակահատվածում Երևանին բաժին է ընկնում ակտիվների քանակի՝ 35.9%-ը (30.06.09թ. Երևանին բաժին է ընկել ակտիվների քանակի 35.0%-ը):

Հաշվետու տարում Երևանում վարկերի աճը հիմնականում պայմանավորված է տրանսպորտի և կապի, արդյունաբերության (հիմնականում մետալուրգիայի, հանքագործության (Երևանում հանքագոր-

ծության ոլորտի վարկավորման աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ մարզերում բանկերը այս ոլորտի վարկավորումն իրականացրել են Երևանում գտնվող գլխամասի միջոցով), շինանյութերի, թանկարժեք իրերի և սննդի), ֆինանսական հատվածի, շինարարության և առևտրի վարկավորման աճերով: ՀՀ մյուս 10 մարզերում և ԼՂՀ-ում վարկերի աճը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության, արդյունաբերության (հիմնականում մետալուրգիայի, շինանյութերի և թանկարժեք իրերի) և առևտրի վարկավորման աճերով: Արդյունաբերության ճյուղի վարկավորման համեմատաբար խոշոր աճեր են արձանագրվել Տավուշի (էներգետիկայի վարկավորման աճ), Վայոց Ձորի (տրանսպորտի և կապի ոլորտի վարկավորման աճ) մարզերում և ԼՂՀ-ում (տրանսպորտի և կապի ոլորտի վարկավորման աճ):

30.09.00-30.06.10թթ. ժամանակահատվածում տնտեսության բոլոր ճյուղերում (արդյունաբերության ճյուղերը դիտարկվում են համընդհանուր մեկ ճյուղ) արձանագրվել են վարկային ներդրումների ծավալների աճ *(տե՛ս հավելվածներ 1.5 և 1.6)*: Հատկանշական է, որ նշված ժամանակահատվածում բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի և կապի, առևտրի ճյուղերի, սպառողական և հիփոթեքային վարկերի աճ:

Հաշվետու տարվա (30.06.09-30.06.10թթ.) ընթացքում.

- արդյունաբերության վարկերը աճել են ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում, բացառությամբ Արագածոտնի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի
- գյուղատնտեսության վարկերը նվազել են ՀՀ գրեթե բոլոր մարզերում, բացառությամբ Երևանի, Կոտայքի, Արմավիրի, Վայոց Ձորի մարզերի և ԼՂՀ-ի
- շինարարության վարկերը աճել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում
- տրանսպորտի և կապի վարկերը նվազել են միայն Արարատի, Արագածոտնի, Տավուշի և Սյունիքի մարզերում
- առևտրի վարկերը աճել են ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում, բացառությամբ Վայոց Ձորի մարզի
- սպառողական վարկերն աճել են ՀՀ գրեթե բոլոր մարզերում, բացառությամբ Երևանի և Սյունիքի մարզերի
- հիփոթեքային վարկերն աճել են Վայոց Ձորի, Շիրակի, Լոռու, Արարատի մարզերում և ԼՂՀ-ում:

Ըստ տնտեսության ճյուղային բաշխվածության, հաշվետու տարում ընդհանուր վարկային ներդրումներում զգալի ավելացել է արդյունաբերության ճյուղի տեսակարար կշիռը և նվազել է սպառողական վարկերինը *(տե՛ս աղյուսակ 2)*:

Աղյուսակ 2 . Վարկային ներդրումների տեսակարար կշիռներն ըստ ճյուղերի (բոլոր բանկերը)

%

Ճյուղեր	**30.09.00**	**31.12.01**	**30.06.03**	**30.06.04**	**30.06.05**	**30.06.06**	**30.06.07**	**30.06.08**	**30.06.09**	**30.06.10**
Արդյունաբերություն	34	38	31	26	22	20	16	12	15	19
Գյուղատնտեսություն	8	11	10	7	8	6	6	5	7	6
Շինարարություն	2	3	4	4	4	4	5	6	7	8
Տրանսպորտ և կապ	2	2	1	1	2	2	1	2	2	3
Առևտուր	11	17	20	21	22	22	20	20	21	21
Ֆինանսական հատված	7	6	7	7	5	6	5	5	4	4
Սպառողական վարկեր	18	14	21	27	27	26	29	29	22	18
Հիփոթեքային					4	8	11	13	13	11
Այլ ճյուղեր	18	9	6	7	6	6	7	8	9	10

Ընդհանուր վարկերի բաշխվածությունը տնտեսության ճյուղերում ըստ մարզերի բևեռացված բնույթ ունի և կենտրոնացված է Երևանում (բացառությամբ գյուղատնտեսության ճյուղի. Երևանին բաժին է ընկնում ընդհանուր վարկերի 8%-ը) *(տե՛ս հավելված 1.2)*: Գյուղատնտեսության ճյուղին տրամադրված վարկերը մարզերի միջև համեմատաբար հավասարաչափ են բաշխված. ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Արմավիրի մարզը (23%),Արարատի մարզը (18%) և Կոտայքի մարզը (14%), իսկ ամենափոքր տեսակարար կշիռը՝ Վայոց Ձորի մարզը (2.4%) և Տավուշի մարզը (2.1%):

Երևանում գյուղատնտեսության վարկերից հետո ցածր կենտրոնացվածություն ունեն սպառողական և արդյունաբերության վարկերը՝ համապատասխանաբար 56% և 67% մասնաբաժիններով:

Հաշվետու տարում Երևանի վարկավորման տեսակարար կշիռը փոքր-ինչ նվազել է սպառողական և հիփոթեքային վարկերում:

Վարկային ներդրումների ժամկետայնության առումով հաշվետու տարում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշիռը նվազել է 2 տոկոսային կետով և կազմել 78%: 30.06.10թ. դրությամբ ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի ծավալները գերազանցում է կարճաժամկետ վարկերի ծավալները (*տե՛ս հավելված 1.3*):

Հարկ է նշել, որ 30.09.00թ. դրությամբ ընդհանուր վարկային ներդրումներում մինչև 1 տարի ժամկետայնությամբ վարկերը կազմել են 53%, 31.12.01թ. դրությամբ՝ 41 %, 30.06.03թ. դրությամբ՝ 50%, 30.06.04թ. դրությամբ՝ 53%, 30.06.05թ. դրությամբ՝ 52%, 30.06.06թ. դրությամբ՝ 35%, 30.06.07թ. դրությամբ՝ 32% և 30.06.08թ. դրությամբ՝ 26%:

Հաշվետու տարվա ընթացքում վարկային ներդրումների կառուցվածքում արտարժութային վարկերի տեսակարար կշիռը ավելացել է 3 տոկոսային կետով և 30.06.10թ. դրությամբ կազմել ընդհանուր վարկերի 54%-ը (*տե՛ս հավելված 1.4*): 30.06.10թ. դրությամբ արտարժութային վարկերի ծավալները գերազանցում են դրամային վարկերի ծավալները Երևանում և Արարատի մարզում: Վարկային ներդրումների համեմատաբար մեծ մասնաբաժին ունեցող Երևան քաղաքում, ԼՂՀ-ում և Կոտայքի մարզերում ըստ արժույթի տեսակի վարկային ներդրումների կառուցվածքը հետևյալն է.

Աղյուսակ 3. Արժութային վարկերի տեսակարար կշիռները՝ ըստ ժամանակահատվածների

%

Վարկեր	Երևան	ԼՂՀ	Կոտայքի մարզ	Ընդամենը
Արտարժույթով 30.09.00թ.	88	46	85	84
Արտարժույթով 31.12.01թ.	82	83	75	82
Արտարժույթով 30.06.03թ.	65	92	90	71
Արտարժույթով 30.06.04թ.	65	67	72	68
Արտարժույթով 30.06.05թ.	67	55	74	67
Արտարժույթով 30.06.06թ.	59	39	64	59
Արտարժույթով 30.06.07թ.	47	20	41	41
Արտարժույթով 30.06.08թ.	40	21	32	37
Արտարժույթով 30.06.09թ.	52	50	55	51
Արտարժույթով 30.06.10թ.	59	44	50	54

Հաշվետու տարում ընդհանուր վարկային ներդրումների կազմում փոքր և միջին բիզնեսին[2] տրամադրված վարկերի տեսակարար կշիռը ավելացել է 2 տոկոսային կետով և 30.06.10 թ. դրությամբ կազմել 32% (*տե՛ս հավելված 1.1*): Փոքր և միջին բիզնեսին համակարգի կողմից տրամադրված ընդհանուր վարկերում Երևանի մասնաբաժինը ավելացել է 2 տոկոսային կետով՝ կազմելով 66% (*տե՛ս հավելված 1.2*): Հաշվետու տարում փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկերի ծավալներն աճել են 35%-ով, իսկ 30.09.00-30.06.10թթ. ժամանակահատվածում (բոլոր բանկերը) 1094%-ով (*տե՛ս հավելվածներ 1.5 և 1.7*):

Միջազգային ծրագրերով[3] տրամադրված վարկերը հաշվետու տարում աճել են 75%-ով, ընդ որում բոլոր մարզերում միջազգային ծրագրերով տրամադրված վարկերը աճել են, բացառությամբ Սյունիքի մարզի: Վերջինիս միջազգային ծրագրերով տրամադրված վարկերը նվազել են 0.7%-ով: Մարզերին տրամադրված ընդհանուր վարկերի մեջ միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի տեսակարար կշիռները հաշվետու տարում ավելացել են (30.06.10թ.՝ ըստ մարզերի տատանվում է 4%-47%՝ ի համեմատություն 30.06.09թ.՝ 15%-35%): Վերջինիս տեսակարար կշիռը բավականին բարձր է՝ վկայելով ՀՀ մարզերի համար միջազգային ծրագրերի շրջանակներում իրականացվող վարկավորման կարևորությունը (*տե՛ս հավելված 1.1*):

Միջազգային ծրագրերով տրամադրված վարկերում 11 տոկոսային կետով աճել է Երևանի մասնաբաժինը. 30.06.10թ. դրությամբ այդ վարկերի 54%-ը հատկացված է Երևանին (30.06.09թ.՝ 43%) (*տե՛ս գծապատկեր 5*):


---

[2] Փոքր և միջին բիզնեսը ներառում է այն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին, որոնց աշխատողների թվաքանակը կազմում է մինչև 100 աշխատող:

[3] Միջազգային ծրագրերով տրամադրված վարկերին է վերաբերում միջազգային ծրագրերի (օր. Գերմանա-հայկական հիմնադրամի ծրագրեր, Համաշխարհային Բանկի Գյուղատնտեսության բարեփոխումների աջակցության ծրագիր և այլն) միջոցով բանկերի միջնորդությամբ տրամադրված վարկերը:

Գծապատկեր 5

Միջազգային ծրագրերով տրամադրած վարկերի կառուցվածքն ըստ մարզերի




1.Երևան, 2.Արարատի մարզ, 3.Կոտայքի մարզ, 4.Արմավիրի մարզ, 5.Արագածոտնի մարզ, 6.Շիրակի մարզ, 7. Լոռու մարզ, 8.Գեղարքունիքի մարզ, 9.Տավուշի մարզ, 10.Վայոց ձորի մարզ, 11. Սյունիքի մարզ, 12. ԼՂՀ

Ըստ վարկային ներդրումների վերադարձելիության՝ հաշվետու տարում ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը նվազել է 2.9 տոկոսային կետով՝ 30.06.10թ. դրությամբ կազմելով ընդհանուր վարկերի 1.1%-ը (*տե՛ս հավելված 1.1 և գծապատկեր 6*):

Գծապատկեր 6

Ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը մարզի ընդհանուր վարկերում



Ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումներում համեմատաբար բարձր է Գեղարքունիքի և Լոռու մարզերում (*տե՛ս Գծապատկեր 6*):

Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումները

30.06.10թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 29 վարկային կազմակերպություններ, որոնց տրամադրած ընդհանուր վարկերի ծավալը կազմել է բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի ծավալի 7.6%-ը (30.06.09թ.՝ 8.5%-ը):

30.06.09-30.06.10թթ. ժամանակահատվածում վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերն ավելացել են 12%-ով (6.5 մլրդ դրամով)՝ ի հաշիվ գյուղատնտեսության, առևտրի և ֆինանսական հատվածի ճյուղերում վարկերի աճի:

Դիտարկվող ժամանակաշրջաններում վարկային կազմակերպությունների վարկերն ըստ ճյուղերի ունեցել են հետևյալ կառուցվածքը.

Աղյուսակ 4. Վարկերն ըստ տնտեսության ճյուղերի

Տնտեսության ճյուղեր	Վարկերի ծավալ (մլն ՀՀ դրամ)								Տեսակարար կշիռ (%)							
	30.06.03	30.06.04	30.06.05	30.06.06	30.06.07	30.06.08	30.06.09	30.06.10	30.06.03	30.06.04	30.06.05	30.06.06	30.06.07	30.06.08	30.06.08	30.06.10
Արդյունաբերություն	718	497	1371	2203	3544	4817	7054	8609	23	36	29	26	13	9	13	14
այդ թվում՝ սննդի	591	313	742	1152	1196	1494	1584	1544	14	30	16	14	4	3	3	3
Գյուղատնտեսություն	269	312	537	1046	2481	6676	4790	12529	14	14	11	12	9	13	9	21
Առևտուր	54	111	270	1235	6969	9151	7561	10283	5	3	6	15	24	17	14	17
Շինարարություն	121	89	112	193	1253	5482	9148	1559	4	6	2	2	4	11	17	3
Սպառողական (ներառյալ հիփոթեք)	492	864	1584	2396	8455	13368	12953	9602	40	25	34	28	30	25	24	16
Այլ ճյուղեր	324	315	832	1434	5822	13316	10707	16209	14	16	18	17	20	25	20	26
Ընդամենը	1977	2185	4706	8508	28525	52811	53798	60335	100	100	100	100	100	100	100	100

Հաշվետու տարում վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի աճ է արձանագրվել գրեթե բոլոր մարզերում, բացառությամբ Երևանի, Լոռու,Տավուշի և Վայոց Ձորի մարզերի (տե՛ս աղյուսակ 5): Վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված ընդհանուր վարկերում 12.2 տոկոսային կետով նվազել է ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող Երևանի մասնաբաժինը՝ կազմելով 55.9%:

Աղյուսակ 5. Վարկերն ըստ մարզերի (հազար ՀՀ դրամ)

	Երևան	Արարատ	Կոտայք	Արմավիր	Արագածոտն	Շիրակ	Լոռի	Գեղարքունիք	Տավուշ	Վայոց ձոր	Սյունիք	ԼՂՀ
30.06.03												
վարկերի ծավալները	732523	140711	347977	328411	24715	10955	18282	5198	31693	8359	328640	
տեսակարար կշիռները (%)	37.0	7.1	17.6	16.6	1.2	0.6	0.9	0.3	1.6	0.4	16.6	
30.06.04												
վարկերի ծավալները	1464134	76409	28056	41233	75318	18110	26532	12726	70551	30724	341034	
տեսակարար կշիռները (%)	67.0	3.5	1.3	1.9	3.4	0.8	1.2	0.6	3.2	1.4	15.6	
30.06.05												
վարկերի ծավալները	3054690	38852	216496	127993	142609	165228	199822	40155	165667	55467	498759	
տեսակարար կշիռները (%)	64.9	0.8	4.6	2.7	3.0	3.5	4.3	0.9	3.5	1.2	10.6	
30.06.06												
վարկերի ծավալները	5133064	223093	481738	238415	183164	403482	443152	183109	117965	71290	910830	118594
տեսակարար կշիռները (%)	60.3	2.6	5.7	2.8	2.2	4.7	5.2	2.2	1.4	0.8	10.7	1.4
30.06.07												
վարկերի ծավալները	18824712	1033694	941069	1499227	534782	1062152	1300085	573330	512376	210739	434469	598130
տեսակարար կշիռները (%)	66.0	3.6	3.3	5.3	1.9	3.7	4.6	2.0	1.8	0.7	5.0	2.1
30.06.08												
վարկերի ծավալները	34953514	1877424	2126097	2842366	1097859	1720411	2223500	1038964	1136956	362216	2171493	1260057
տեսակարար կշիռները (%)	66.2	3.6	4.0	5.4	2.1	3.3	4.2	2.0	2.2	0.7	4.1	2.4
30.06.09												
վարկերի ծավալները	36619084	1499920	1948526	2469149	771746	1682260	2394086	691453	1879617	1308447	1761307	772197
տեսակարար կշիռները (%)	68.1	2.8	3.6	4.6	1.4	3.1	4.5	1.3	3.5	2.4	3.3	1.4
30.06.10												
վարկերի ծավալները	33718369	4475028	2224890	4897139	1561345	2045382	2085920	1664782	1168453	544999	2448781	3499700
տեսակարար կշիռները (%)	55.9	7.4	3.7	8.1	2.6	3.4	3.5	2.8	1.9	0.9	4.1	5.8


2. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ[4]

30.09.00-30.06.10թթ. ժամանակահատվածում (բոլոր բանկերը) ՀՀ և ԼՂՀ տարածքներում ներգրավված միջոցները ավելացել են 501%-ով և կազմել 614.2 մլրդ դրամ, ընդ որում ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է ավանդների աճ: Ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները աճել են 698%-ով, իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները՝ 355%-ով և կազմել են համապատասխանաբար 346.3 մլրդ դրամ և 268.0 մլրդ դրամ (*տե՛ս հավելված 1.5*):

Ներկայիս գործող բանկերի կողմից ներգրավված միջոցները նշված ժամանակահատվածում աճել են 789%-ով ընդ որում ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները աճել են 961%-ով, իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները՝ 636%-ով (*տե՛ս հավելված 1.6*):

Հաշվետու տարում ներգրավված միջոցների կենտրոնացվածությունը Երևանում նվազել է 4 տոկոսային կետով և կազմել 80% (ընդ որում 2000-2009թթ. Երևանում ավանդների կենտրոնացվածությունը տատանվում է 82-85%-ի շրջանակներում): Ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցների կենտրոնացվածությունը Երևանում մնացել է նույնը, իսկ իրավաբանական անձանցից ներգրավված միջոցներինը՝ նվազել է 8 տոկոսային կետով և կազմել են համապատասխանաբար 85% և 74% (*տե՛ս հավելված 2.2*):

Գծապատկեր 7



**Պատկերի հստակության նպատակով Երևանի տվյալները ներառված չեն, որտեղ 30.06.10 թ. դրությամբ ավանդների ծավալը կազմել է 491 մլրդ դրամ:*


Հաշվետու տարում ՀՀ և ԼՂՀ տարածքներում ներգրավված միջոցները ավելացել են 24%-ով, ընդ որում ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում ավանդները ցուցաբերել են աճի միտում (*տե՛ս գծապատկեր 7*):

Հաշվետու տարվա ընթացքում ընդհանուր ներգրավված միջոցների կազմում ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռը ավելացել է 3 տոկոսային կետով՝ կազմելով 56% (*տե՛ս հավելված 2.1 և գծապատկեր 8*): 30.06.10թ. դրությամբ, ֆիզիկական անձանց ավանդները գերակշռում են 9 մարզերում (30.06.09թ. ֆիզիկական անձանց ավանդները գերակշռում էին դարձյալ 9 մարզերում):

---


[4] Ներգրավված միջոցները ներառում են միայն ՀՀ և ԼՂՀ տարածքներում ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ցպահանջ (ներառյալ բանկային հաշիվները) և ժամկետային ավանդները:

Գծապատկեր 8



Ըստ ներգրավված միջոցների ժամկետայնության՝ հաշվետու տարում ժամկետային ավանդների տեսակարար կշիռը նվազել է 5 տոկոսային կետով և կազմել 57%: Բացառությամբ Կոտայքի մարզի ՀՀ մյուս բոլոր մարզերում և ԼՂՀ-ում ժամկետային ավանդների ծավալները գերազանցում են ցպահանջ ավանդների ծավալները (*տե՛ս հավելված 2.3 և գծապատկեր 9*):

Գծապատկեր 9




30.06.10թ. Երևանին բաժին է ընկնում ընդհանուր ցպահանջ ավանդների 82%-ը և ընդհանուր ժամկետային ավանդների 78%-ը, ընդ որում. 30.06.09թ. Երևանին բաժին էր ընկնում համապատասխանաբար 85%-ը և 83%-ը, իսկ 30.09.00թ.՝ 82%-ը և 85%-ը:

Ցպահանջ միջոցների գերակշիռ մասը (62%) կազմում են իրավաբանական անձանց միջոցները, ինչը արտահայտված է բոլոր մարզերում և ԼՂՀ-ում, իսկ ժամկետային միջոցների գերակշիռ մասը (70%) կազմում են ֆիզիկական անձանց ավանդները, ինչը արտահայտված է ՀՀ գրեթե բոլոր մարզերում, իսկ ԼՂՀ-ում և Սյունիքի մարզերում հակառակը (*տե՛ս հավելվածներ 2.5 և 2.7*):

Հաշվետու տարում ներգրավված միջոցների կազմում ՀՀ դրամով ավանդների տեսակարար կշիռը մնացել է նույնը՝ 30.06.10թ. դրությամբ կազմելով ընդհանուր ներգրավված միջոցների 27%-ը. 30.09.00թ.

դրությամբ ՀՀ դրամով ավանդները կազմել են ներգրավված միջոցների 24%-ը: ՀՀ գրեթե բոլոր մարզերում (բացառությամբ Արարատի և Տավուշի մարզերի) արտարժույթով ավանդների տեսակարար կշիռը գերազանցում է դրամով ներգրաված ավանդների տեսակարար կշռին (*տե՛ս հավելված 2.4 և գծապատկեր 10*):

Գծապատկեր 10




Ըստ ներգրավման աղբյուրների՝ 30.06.10թ. դրությամբ արտարժույթով ներգրավված միջոցների 40%-ը, իսկ դրամով ներգրավված միջոցների 54%-ը հավաքագրվել է իրավաբանական անձանցից (*տե՛ս հավելվածներ 2.9 և 2.11*):

3. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

30.06.10թ. դրությամբ բանկային համակարգի կողմից ներգրավված միջոցների ընդհանուր ծավալը զիջել է վարկային ներդրումների ծավալին (22%-ով): Վարկերի ծավալները գերազանցում են ավանդների ծավալները գրեթե ՀՀ բոլոր մարզերում, բացառությամբ Սյունիքի մարզի (*տե՛ս գծապատկեր 11*):


Գծապատկեր 11



** Պատկերի հստակության նպատակով Երևանի տվյալները ներառված չեն, որտեղ 30.06.10թ. ներգրավված միջոցները կազմել են 491 մլրդ դրամ, վարկերն առանց միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի՝ 463 մլրդ դրամ, ընդհանուր վարկերը՝ 542 մլրդ դրամ:*


Տարածքային ստորաբաժանումների բաշխվածության առումով հաշվետու տարում մեկ մասնաճյուղին[5] բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները ավելացել են համապատասխանաբար 94 մլն դրամով և 142 մլն դրամով և 30.06.10թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար 1.3 մլրդ դրամ և 1.7 մլրդ դրամ *(տե՛ս հավելված 3 և գծապատկեր 12)*:

Գծապատկեր 12



Մեկ շնչին բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները դարձյալ ցուցաբերել են աճի միտումներ. աճել են համապատասխանաբար 23%-ով և 25%-ով և 30.06.10թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար 180.9 հազար դրամ և 233.3 հազար դրամ (*տե՛ս հավելված 3 և գծապատկեր 13*):

Գծապատկեր 13



[5] *Գլխամասային գրասենյակները դիտվել են որպես մասնաճյուղ:*

4. ԱՄՓՈՓՈՒՄ

30.09.00-30.06.10թթ. ժամանակահատվածում

1. ՀՀ, ինչպես նաև ԼՂՀ տարածքներում գործող բոլոր առևտրային բանկերի կողմից տրամադրված ընդհանուր վարկային ներդրումների ծավալն ավելացել է 717%-ով (ներկայիս բանկերի կտրվածքով՝ 1080% աճ) և կազմել 792.0 մլրդ դրամ, ընդ որում՝ ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է վարկային ներդրումների աճ: Վարկային ներդրումների տարածքային կենտրոնացվածությունը բարձր է. Երևանին բաժին է ընկնում վարկերի 68.4%-ը (30.06.00-30.06.10թթ. ժամանակահատվածում Երևանում վարկերի կենտրոնացվածությունը նվազել է 1 տոկոսային կետով):

2. Ավանդները (բոլոր բանկերով) ավելացել են 501%-ով (ներկայիս բանկերի կտրվածքով՝ 789% աճ) և կազմել 614.2 մլրդ դրամ: Նշված ժամանակահատվածում (բոլոր բանկերը) ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է ավանդների աճ: Ավանդների տարածքային կենտրոնացվածությունը նույնպես բարձր է. Երևանին բաժին է ընկնում ավանդների 80%-ը, ընդ որում 2000 թվականից առ այսօր տատանվում է այդ մակարդակի շրջանակներում:

3. Նշված ժամանակահատվածում հատկանշական փոփոխություններն են.

- վարկերի որակի բարելավում. 30.09.00թ. ժամկետանց վարկերը կազմում էին ընդհանուր վարկերի 14%-ը (ամենամեծ տեսակարար կշիռն ունեին Շիրակի մարզը (30%) և Երևանը՝ (17%)), իսկ 30.06.10թ. դրությամբ՝ ընդհանուր վարկերի 1.1%-ը (ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Գեղարքունիքի (2.2%), Լոռու (1.8%) և Տավուշի մարզերը՝ (1.6%)):
- 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշռի կտրուկ ավելացում. ավելացել է 31 տոկոսային կետով և կազմել 78%: 30.09.00թ. 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի ծավալը գերազանցել է մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ վարկերի ծավալը 6 մարզերում (Տավուշի, Գեղարքունիքի, Արարատի, Արմավիրի, Լոռու և Արագածոտնի մարզերում), իսկ 30.06.10թ.՝ ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում:

30.06.09-30.06.10թթ. ժամանակահատվածում

1. ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում (բացառությամբ Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի) արձանագրվել է վարկային ներդրումների աճ: Ավանդների աճ է արձանագրվել ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում: Վարկերի աճի տեմպը (25% աճ) գերազանցել է ավանդների աճի տեմպը (24% աճ):

2. Նշված ժամանակահատվածում հատկանշական փոփոխություններն են.

- Միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի աճի տեմպը (75%) գերազանցել է ընդհանուր վարկային ներդրումների աճի տեմպը (25%), ինչի արդյունքում ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում (բացառությամբ Տավուշի մարզի) տրամադրված ընդհանուր վարկերում ավելացել է միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի տեսակարար կշիռը:
- 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերը աճել են 22%-ով, մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ վարկերը՝ 38%-ով, ինչի արդյունքում ընդհանուր վարկերում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշիռը նվազել է 2 տոկոսային կետով և կազմել 78%: ՀՀ գրեթե բոլոր մարզերում (բացառությամբ Լոռու, Տավուշի, Սյունիքի մարզերի և ԼՂՀ-ի) 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշիռը ընդհանուրում նվազել է:
- ՀՀ դրամով տրամադրված վարկերը աճել են 17%-ով, արտարժույթով տրամադրված վարկերը աճել են 34%-ով, ինչի արդյունքում դրամով վարկերի տեսակարար կշիռը նվազել է 3 տոկոսային կետով և կազմել է 46%: ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արտարժութային վարկերի տեսակարար կշիռը ընդհանուրում նվազել է (բացառությամբ Երևանի, Կոտայքի, Տավուշի և Վայոց Ձորի մարզերի):
- ՀՀ դրամով ավանդները աճել են 21%-ով, արտարժույթով ավանդները աճել են 24%-ով, որի արդյունքում դրամով ավանդների տեսակարար կշիռը գրեթե չի փոխվել և կազմել է ընդհանուր ավանդների 27%-ը: ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արտարժութային ավանդների տեսակարար կշիռը ընդհանուրում նվազել է (բացառությամբ Արմավիրի, Շիրակի, Սյունիքի մարզերի և ԼՂՀ-ի):
- Ժամկետային ավանդներն աճել են 14%-ով, իսկ ցպահանջ ավանդները՝ 40%-ով, որի արդյունքում ժամկետային ավանդների տեսակարար կշիռը նվազել է 5 տոկոսային կետով և կազմել ընդհանուր ավանդների 57%-ը:

- Ֆիզիկական անձանց ավանդներն աճել են 31%-ով, իրավաբանական անձանցը՝ 15%-ով, որի արդյունքում ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռն ավելացել է 3 տոկոսային կետով և կազմել ընդհանուր ավանդների 56%-ը: Բացառությամբ Կոտայքի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերի և ԼՂՀ-ի, ՀՀ մյուս բոլոր մարզերում արձանագրվել է ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշռի աճ:

30.06.10թ. դրությամբ

Ըստ տեղաբաշխված ոլորտների, մարզերում տեղաբաշխված վարկային ներդրումներում տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է առևտրի, արդյունաբերության, շինարարության, սպառողական և հիփոթեքային ճյուղի վարկերում (*տե՛ս հավելված 1.1*).

Արդյունաբերության ճյուղ. ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում բավականին բարձր է արդյունաբերության վարկերի տեսակարար կշիռը (տատանվում է 10-33%-ի միջակայքում), իսկ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Վայոց Ձորի և Կոտայքի մարզերը (33% և 29%):

Առևտրի ճյուղ. առևտրի վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 10-24%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Երևանը, Սյունիքի և Արագածոտնի մարզերը, որտեղ տրամադրված ընդհանուր վարկերի համապատասխանաբար 24%-ը, 22%-ը և 18%-ը հատկացված է առևտրի ճյուղին:

Սպառողական վարկեր. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում սպառողական վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 14-39%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Շիրակի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերը, որտեղ սպառողական վարկերի տեսակարար կշիռը կազմում է համապատասխանաբար 39%, 38% և 36%:

Հիփոթեքային վարկեր. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում հիփոթեքային վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 4-12%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Երևանը, ԼՂՀ-ն, Շիրակի և Արմավիրի մարզերը (տատանվում է 8-12% միջակայքում):

Շինարարության ճյուղ. համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունեն ԼՂՀ-ն, Երևանը և Շիրակի մարզը, որտեղ տրամադրված վարկերի համապատասխանաբար 17%-ը, 9%-ը և 7%-ը հատկացված են այս ճյուղին:

Գյուղատնտեսության ճյուղ. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում գյուղատնտեսության վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 1-38%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Արմավիրի, Արագածոտնի և Արարատի մարզերը (տատանվում է 30-38% միջակայքում), իսկ ամենափոքր տեսակարար կշիռն ունի Երևանը՝1%:

Հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտներ. այս ոլորտի վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 1-7%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Վայոց Ձորի և Կոտայքի մարզերը (7-ական տոկոս):

Տրանսպորտի և կապի ճյուղ. բոլոր մարզերում այս ճյուղին տրամադրած վարկերն ունեն շատ փոքր տեսակարար կշիռ: Ամենից մեծ տեսակարար կշիռ ունի Երևանը և Սյունիքի մարզը, որտեղ տրամադրված վարկերի համապատասխանաբար 4%-ը և 3%-ը հատկացված է այս ճյուղին: